ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2016, 54 – Ա

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ , ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‘Արդարադատության ակադեմիայի մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և ‘Արդարադատության ակադեմիա’ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 19-րդ կետի 10-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի առաջարկությունը՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը, ‘Արդարադատության ակադեմիայի մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված կազմով, ***որոշում է.***

1. Հաստատել դատավորների և արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման 2016 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել դատական ծառայողների վերապատրաստման 2016 թվականի ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման 2016 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Հաստատել դատավորների հատուկ ուսուցման 2016 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելված 4-ի:

Արդարադատության ակադեմիայի
Ե.Խունդկարյան
կառավարման խորհրդի նախագահ

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ ***Ա.Մկրտչյան***

Հ.Ասատրյան

Հ.Բեդևյան

2016թ. փետրվարի 15

ք.Երևան

Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2016 թվականի
փետրվարի 15-ի թիվ 54-Ա որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների, ինչպես նաև արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ դատավորներ) 2016թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է դատավորների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում.

ա) Ընդհանուր մասնագիտական ոլորտ: Վերապատրաստման գործընթացը վերաբերում է իրավական մեկնաբանմանը, ռասիզմի և խտրականության դեմ պայքարին, փախստականների իրավունքների պաշտպանությանը, ՄԻԵԴ իրավաբանության հիմունքներին, դատավորի էթիկային, կոռուպցիայի դեմ պայքարին, ինչպես նաև Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցերին: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է ռասիզմի և խտրականության դեմ պայքարի, փախստականների իրավունքների պաշտպանության, ՄԻԵԴ իրավաբանության հիմունքների, դատավորի էթիկայի, Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերի, ինչպես նաև Մարդու իրավունքների միջազգային իրավունքի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև իրավական մեկնաբանման հմտությունների ձևավորմանը:

բ) Հարակից մասնագիտական ոլորտ: Վերապատրաստման գործընթացը վերաբերում է հասարակագիտական ուղղվածություն ունեցող վերաբերելի գիտելիքների և հմտությունների ձևավորմանը և կատարելագործմանը: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում ունկնդիրները կընդլայնեն իրենց գիտելիքները և հմտությունները փաստարկման և հռետորիկայի, սթրեսի և ժամանակի կառավարման, կառավարման հմտությունների և ներազդման հոգեբանության, ինչպես նաև քննադատական մտածողության ոլորտներում:

գ) Քաղաքացիական իրավունք և դատավարություն: Վերապատրաստման գործընթացը վերաբերում է քաղաքացիական իրավունքում և դատավարությունում առկա արդի հարցերին: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում կատարելագործվում են քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները, սնանկության վարույթի արդի հարցերի, ինչպես նաև պարտավորաիրավական հարաբերությունների արդի հարցերը, սեփականության և ժառանգական իրավունքի, մտավոր սեփականության իրավունքի, քաղաքացիական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, աշխատանքային իրավունքի, ոչ նյութական վնասի հատուցման, վեճերի այլընտրանքային լուծման, դատական փորձաքննության և արդի այլ հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները:

դ) Վարչական իրավունք և դատավարություն: Վերապատրաստման գործընթացը վերաբերում է վարչական իրավունքում և դատավարությունում առկա արդի հարցերին: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում կատարելագործվում են վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև վարչական վարույթի, դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի, մաքսային իրավունքի, հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների, վարչական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, մտավոր սեփականության իրավունքի, էկոլոգիական իրավունքի, դատական փորձաքննության և արդի այլ հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները:

ե) Քրեական իրավունք և դատավարություն: Վերապատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և դատավարությունում առկա արդի հարցերին: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում կատարելագործվում են քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև քրեական իրավունքի, քրեական գործերով

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, կիբերհանցագործությունների քննության, դատական փորձաքննության, անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունների և արդի այլ հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները:

4. Ուսումնառության ժամաքանակը յուրաքանչյուր դատավորի համար սահմանվում է 80 ակադեմիական ժամ: Ուսումնառությունը իրականացվում է երկու փուլով՝ յուրաքանչյուրը 40 ակադեմիական ժամ (մեկ շաբաթ) տևողությամբ:

5. Դատավորների վերապատրաստումն իրականացվում է ընդհանուր, հարակից և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա: Յուրաքանչյուր դատավոր իր մասնագիտացմանը (քաղաքացիաիրավական, քրեաիրավական, վարչաիրավական) համապատասխանող հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացների շրջանակներում վերապատրաստվում է 40-ական ակադեմիական ժամ, ինչպես նաև կամ ընդհանուր կամ հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրված դասընթացների շրջանակներում վերապատրաստվում է 40-ական ակադեմիական ժամ ծավալով:

6. Ծրագիրն իրականացվում է առկա և հեռավար ուսուցման ձևով: Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրված դասընթացները կազմակերպվում են հեռավար, իսկ ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացները՝ առկա ուսուցման ձևով:

7. Դատավորը չի կարող ընտրել իր մասնագիտացումից տարբերվող հատուկ մասնագիտական դասընթացների որևէ այլ մոդուլում ընդգրկված դասընթաց:

8. Ուսումնառությունը սկսվում է դատավորների կողմից ընտրված առարկայական կուրսերի ցուցակը Օրենքով սահմանված կարգով Ակադեմիա ներկայացնելուց հետո երկամսյա ժամկետում՝ Ակադեմիայի կառավարման խորհրդի հաստատած ժամանակացույցի հիման վրա:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-021-16	Իրավական մեկնաբանման հարցերը	10
2.	J-022-16	Դատավորի մասնագիտական էթիկա	10
3.	J-017-16	Ռասիզմի և խտրականության դեմ պայքարի արդի հարցերը	10
4.	J-018-16	Փախստականների իրավունքների պաշտպանության արդի հարցերը	10

5.	J-003-16	ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները	10
6.	J-020-16	Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցերը	10
7.	J-014-16	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը	10

2. Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
8.	G-017-16	Փաստարկում և հռետորիկա	40
9.	G-018-16	Սթրեսի և ժամանակի կառավարում	40
10.	G-021-16	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	40
11.	G-022-16	Քննադատական մտածողություն	40

3. Քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
12.	Q-032-16	Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը	10
13.	C-023-16	ՀՀ պարտավորական իրավունքի արդի հարցերը	10
14.	C-013-16	ՄԻԵԴ նախադեպային իրավունքը քաղաքացիական դատավարությունում	10
15.	C-014-16	ՄԻԵԴ նախադեպային իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում	10
16.	C-016-16	ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը	10
17.	C-022-16	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը	20
18.	C-017-16	ՀՀ սեփականության իրավունքի արդի հարցերը	10
19.	C-008-16	ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը	10
20.	C-024-16	Արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման այլ եղանակների արդի հարցերը	10
21.	C-025-16	Սնանկության վարույթի արդի հարցերը	10
22.	C-009-16	ՀՀ ժառանգական իրավունքի արդի հարցերը	10
23.	C-027-16	Եվրասիական տնտեսական միության իրավունքը և դատարանի դերը դրա կայացման և զարգացման գործում	10
24.	J-024-16	Դատական փորձաքննության արդի հարցերը	10

4. Վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
25.	A-001-16	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով	10

26.	A-008-16	ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը	10
27.	A-003-16	ՀՀ վարչական վարույթի արդի հարցերը	10
28.	A-004-16	ՀՀ հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների արդի հարցերը	10
29.	A-005-16	Ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում	10
30.	A-006-16	Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում	10
31.	A-011-16	ՀՀ մաքսային իրավունքի արդի հարցերը	10
32.	A-010-16	ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցերը	10
33.	C-016-16	ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը	10
34.	C-027-16	Եվրասիական տնտեսական միության իրավունքը և դատարանի դերը դրա կայացման և զարգացման գործում	10
35.	J-024-16	Դատական փորձաքննության արդի հարցերը	10

5. Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	**Դասիչ**	**Անվանում**	**Ժ/ք**
36.	Q-001-16	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	10
37.	Q-032-16	Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը	10
38.	Q-011-16	Անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները	10
39.	Q-035-16	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	10
40.	Q-022-16	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	10
41.	Q-024-16	Դատական վերանայման հարցերը համաձայն ՀՀ քրեադատավարական նոր օրենսդրության	10
42.	Q-025-16	ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի գործառույթները համաձայն քրեադատավարական նոր օրենսդրության	10
43.	Q-030-16	Կիբերհանցագործությունների քննության արդի հարցերը	10
44.	J-024-16	Դատական փորձաքննության արդի հարցերը	10

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. J-021-16. Իրավական մեկնաբանման հարցերը

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտում կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության հետ կապված գործնական հարցերը,
- օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների կիրառման հետ կապված գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

2. J-022-16. Դատավորի մասնագիտական էթիկա

Դասընթացը պայմանավորված է դատավորի մասնագիտական էթիկայի կանոնների հետ կապված գիտելիքները կատարելագործելու և դրանք կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է արդարադատություն իրականացնելիս և ոչ դատական գործունեության ընթացքում դատավորի վարքագծի կանոնների, դատավորների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

3. J-017-16. Ռասիզմի և խտրականության դեմ պայքարի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է խտրականության և ռասիզմի դրսևորումների դեմ պայքարի ոլորտում գիտելիքների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- խտրականության և ռասիզմի վերաբերյալ միջազգային պայմանագրերը,
- խտրականության և ռասիզմի դրսևորումների առանձին ձևերը (ազգային, կրոնական, ռասսայական և այլ),
- միջազգային և ներպետական պրակտիկայում առկա իրավական հիմնախնդիրները և դրանց իրականացման նոր եղանակները (մասնավորապես դրանց դրսևորումները համացանցի միջոցով):

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

4. J-018-16. Փախստականների իրավունքների պաշտպանության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է «Փախստականների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառման, փախստականի կարգավիճակ և ապաստան հայցող անձանց,

փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- «Փախստականների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և այլ միջազգային փաստաթղթերով նախատեսված փախստականների կարգավիճակի վերաբերյալ նորմերի՝ ՀՀ օրենսդրությունում իմպլեմենտացիայի («Փախստականների և ապաստանի մասին», «Օտարերկրացիների մասին», «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքներում և այլ իրավական ակտերում) և գործնականում դրանց կիրառման հիմնախնդիրները,
- փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ շրջանակների (ՀՀ ոստիկանության ծառայության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ՏԿԱԻՆ միգրացիոն պետական ծառայության, ՄԱԿ-ի փախստականների գործերով հանձնակատարի գրասենյակի գործունեության), ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի (հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

5. J-003-16. ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է ՄԻԵԴ գործունեության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- ՄԻԵԴ կողմից մշակված իրավական հայեցակարգերի բովանդակությունը, դրանց իրավակիրառ արժեքը և զարգացման միտումները,
- ՄԻԵԴ հիմնական նպատակները,
- իրավազորության շրջանակը,
- գանգատների ընդունելիության պայմանները,
- գործերի քննության կարգը,
- վճիռների կատարման հետ կապված հարցերը,
- ՄԻԵԴ-ի կողմից ապացույցների ձեռքբերումը և գնահատումը,
- ՄԻԵԴ-ի և ազգային դատարանների միջև երկխոսությունը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

6. J-020-16. Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է մարդու իրավունքների միջազգային իրավունքի վերաբերյալ գիտելիքները և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքի ոլորտում առկա և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքների պաշտպանության հիմնահարցերը, այդ թվում՝

- Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները,
- Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային իրավունքը,
- <<Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին>> միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև ներպետական օրենսդրությունում դրանց կիրառելիության հարցերը,
- Մարդու իրավունքներին առնչվող Եվրոպայի Խորհրդի կոնվենցիաները և չափորոշիչները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

7. J-014-16. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրա դեմ տարվող պայքարի հիմնահարցերը,
- հակակոռուպցիոն պայքարի իրավական կարգավորումները (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄՈՆԻՎԱԼ) հանձնարարականները),
- կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ-ի և ՄՈՆԻՎԱԼ-ի գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարակական

կազմակերպությունների, ՀԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

8. G-017-16. Փաստարկում և հռետորիկա

Դասընթացն պայմանավորված է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման, տպավորիչ ելույթի ու արդյունավետ բանավեճի տեխնոլոգիաների տիրապետման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- փաստարկման գործընթացի բաղադրիչները,
- փաստարկման գործընթացի եղանակները,
- փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները,
- ավանդական և ժամանակակից հռետորիկայի զինանոցը,
- առավել հաճախ հանդիպող սխալները,
- բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաները և վերջիններիս չեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

9. G-018-16. Սթրեսի և ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է դատավորների մոտ հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու, ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ինքնակարգավորման և ինքնակառավարման գործընթացների հոգեբանական բնութագիրը,
- սթրեսի հիմքերը և տեսակները,
- ինքնակարգավորման տեսական մոտեցումները,
- սթրեսի կառավարման մեթոդների ընդհանուր բնութագիրը և վերլուծությունը,
- սթրեսի կառավարումը և ինքնագիտակցությունը,
- ինքնաճանաչումը, ինքնավերահսկումը և ինքնակազմակերպումը սթրեսի կառավարման գործընթացում,
- ինքնակարգավորման մեխանիզմները և մակարդակները,

- մարդկային մարմինը որպես էներգետիկ համակարգ,
- ինքնակարգավորման ձևերի դասակարգումը մկանների թուլացման հիմքի վրա, ռելաքսային վիճակի համակարգը, ֆունկցիաները, մեխանիզմները:

Դասընթացը ներառում է նաև՝

- ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը,
- ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ,
- ժամանակի տեսակները,
- ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները,
- մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում,
- մասնագետի ժամանակային իրազեկության,
- ժամանակի հիմնական «թակարդները»,
- ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծությունը, ժամանակաչափումը,
- ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները,
- գլոբալ նպատակների որոշումը,
- երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը,
- կարճաժամկետ և օպերատիվ պլանները,
- նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով,
- Էյզենհաուերի սկզբունքը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

10. G-021-16. Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության, ինչպես նաև հոգեբանական ազդեցության, դրա տեսակների, մեթոդների, մեխանիզմների և տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը,

- ներազդման հոգեբանության հիմնական հասկացությունները, ներազդման տեսակները, մեթոդները ու մեխանիզմները,
- կառուցողական (համոզում, ներշնչում և այլն) և ոչ կառուցողական (մանիպուլյացիա և այլն) ներազդման մեթոդների առանձնահատկությունները,
- Կառուցողական և ոչ կառուցողական ներազդմանը դիմակայելու եղանակները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

11. G-022-16. Քննադատական մտածողություն

Դասընթացն անհրաժեշտ է գործերի քննության, վարկածների ստուգման, դրույթների հիմնավորման, իրավական տեքստերի մեկնաբանման և որոշումների կայացման գործընթացներում քննադատական մտածողության վերաբերյալ դատավորների գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- կշռադատության բաղադրիչների ճանաչումը, դրանց փոխադարձ կապի բացահայտումը, կշռադատության մոդելավորումը,
- ձևային և ոչ ձևային տրամաբանական սխալների տարբերակումը, կշռադատության մեջ ոչ ձևային սխալների ճանաչումը,
- ոչ ձևային տրամաբանական սխալների դասերի և յուրաքանչյուր դասից առավել հաճախ հանդիպող ոչ ձևային սխալների ուսումնասիրությունը և դրանցից խուսափելու հմտությունները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

12. Q-032-16. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին վերաբերող իրավակարգավորումների վերաբերյալ դատավորների գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- խափանման միջոց կալանքի կիրառման և ժամկետի երկարացման պայմանները և հիմքերը,
- կալանավորման հարցի դատական քննության գործնական հարցերը,

- քննչական գործողությունների կատարման նկատմամբ դատական վերահսկողության գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների համար:

13. C-023-16. Պարտավորաիրավական հարաբերությունների արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է գրավի և ապահովագրական պայմանագրերից բխող իրավահարաբերությունների վերաբերյալ դատական պրակտիկայում ի հայտ եկած իրավական խնդիրները վեր հանելու, ոչ նյութական վնասի հատուցման նոր իրավական դիրքորոշումները դատավորներին մատուցելու, պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի, ինչպես նաև կոնվենցիոն իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգին և պայմաններին վերաբերող հարցերի, քաղաքացու կյանքին, առողջությանը պատճառված վնասը հատուցելու ինստիտուտի առանձնահատկությունների, անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունների կատարման վերաբերյալ դատավորների գիտելիքները ընդլայնելու և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է

- գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելու հետ կապված հարցերը,
- գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու կարգը,
- ապահովագրական իրավահարաբերություններում սուբրոգացիայի իրավունքի և նշված պայմանագրային իրավահարաբերություններում առկա այլ արդի հարցերը,
- պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի, ինչպես նաև կոնվենցիոն իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգին և պայմաններին վերաբերող հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

14. C-013-16. ՄԻԵԴ նախադեպային իրավունքը քաղաքացիական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքները և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է Եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը,
- դատարանի իրավունքը,
- օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը,
- անկողմնակալ տրիբունալի էությունը,
- ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը՝ արդարացի լսումներ, մրցակցության սկզբունք, «Զենքերի» հավասարություն, հրապարակային քննություն, ողջամիտ ժամկետի սկզբունք:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

15. C-014-16. ՄԻԵԴ նախադեպային իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքները և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված սեփականության իրավունքի, ինչպես նաև արդարացի բավարարման իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքը,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կիրառման ոլորտը,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական երաշխիքների ապահովման հարցում,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը ձեռնարկատիրական գործունեության իրականացման ոլորտում,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը մտավոր սեփականության ոլորտում,
- սեփականությունից զրկելը (ֆորմալ կամ փաստացի հարկադիր օտարումը),
- սեփականությունից զրկելու օրինականության պայմանները,

- պետական վերահսկողությունը սեփականության օգտագործման նկատմամբ և դրա պարտադիր պայմանները,
- գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտումը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

16. C-016-16. ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է մտավոր սեփականության իրավունքների ապահովման ոլորտում իրականացված բարեփոխումները և նոր իրավական դիրքորոշումները դատավորներին մատուցելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- մտավոր գործունեության արդյունքների, ինչպես նաև քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցների նկատմամբ իրավունքների ծագման, դրանց իրացման հիմնահարցերը,
- հեղինակային իրավունքների իրավական պահպանության հիմնահարցերը,
- արդյունաբերական նմուշների իրավական պահպանության հիմնահարցերը,
- ապրանքային նշանների իրավական պահպանության հիմնահարցերը (ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների խախտման հիմնական տեսակները, շփոթելու աստիճան նման նշանի կիրառումը):

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և վարչական գործեր քննող դատավորների համար:

17. C-022-16. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,

- պետական տուրքի և դատական ծախսերի հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
- դատական հանձնարարությունների կատարման արդի հարցերը,
- քաղաքացիական դատավարությունում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը,
- ՀՀ ընտանեկան և ՀՀ աշխատանքային օրենսգրքերով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման հիմնախնդիրները, ինչպես նաև հատուկ վարույթի այլ գործերի քննության ընթացքում (այդ թվում՝ երեխայի որդեգրման գործերի վարույթը) ծագող հարցերը.
- <<ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի նոր իրավակարգավորումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

18. C-017-16. ՀՀ սեփականության իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է սեփականության իրավունքի ոլորտում առկա հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- սեփականության իրավունքի ձեռք բերման հիմնահարցերը,
- սեփականության իրավունքի դադարման հիմնահարցերը,
- ընդհանուր սեփականության հիմնահարցերը,
- սեփականության իրավունքի պաշտպանության իրավահարաբերություններից բխող հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

19. C-008-16. ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավունքում առկա հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- աշխատանքային իրավահարաբերությունների ծագման և դադարման հիմնահարցերը,
- աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության և պատասխանատվության հիմնահարցերը,
- աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության հարցերը,
- աշխատանքային պայմանագրերի տեսակները,
- աշխատանքային պայմանագրերի լուծման, լուծման կարգի առանձնահատկությունները,
- հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները աշխատանքային հարաբերություններում:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

20. C-022-16. Արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման այլ եղանակների արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է վեճերի այլընտրանքային լուծման ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- վեճերի այլընտրանքային լուծման հիմունքները, նպատակները, տեսակները (բանակցություններ, արբիտրաժ, մեդիացիա), դրանց առանձնահատկությունները,
- հաղորդակցման և բանակցությունների վարման հմտությունների վերաբերյալ հարցերը,
- հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

21. C-004-16. Սնանկության վարույթի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է սնանկության վարույթի ընթացքում ծագող իրավական հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- սնանկության գործերի քննության կարգը և առանձնահատկությունները,
- սնանկ ճանաչելու հարցի լուծման հիմնահարցերը,
- սնանկության վարույթի ընթացքում կայացվող դատական ակտերի, մորատորիումի, համարժեք պաշտպանության հիմնահարցերը,
- սնանկ ճանաչված անձի և պարտատերերի իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը (այդ թվում՝ պարտապանի անունից սնանկության կառավարչի կողմից հայց հարուցելու ինստիտուտի առանձնահատկությունները), ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

22. C-009-16. ՀՀ ժառանգական իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է ժառանգական իրավունքի ոլորտում առկա հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգության հիմնահարցերը,
- ժառանգության ընդունման, դրա ձևակերպման հիմնահարցերը,
- ժառանգությունից հրաժարման հիմնահարցերը,
- ժառանգության պահպանման և կառավարման հիմնահարցերը,
- ժառանգության հետ կապված ծախսերի հատուցման հարցերը,
- գույքի առանձին տեսակների ժառանգման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

23. C-027-16. Եվրասիական տնտեսական միության իրավունքը և դատարանի դերը դրա կայացման և զարգացման գործում

Դասընթացն անհրաժեշտ է Եվրասիական տնտեսական միության իրավունքի և դատարանի դերի վերաբերյալ գիտելիքները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի ընդհանուր բնութագիրը,

- Եվրասիական տնտեսական միության դատարանի իրավազորության վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և վարչական գործեր քննող դատավորների համար:

24. J-024-16. Դատական փորձաքննության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փարձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական, վարչական և քաղաքացիական վարույթներում փորձաքննությունների նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

25. A-001-16. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ դատավորների գիտելիքները և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության արդյունքում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ արտահայտվելու ազատության իրավունքի, խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդրի, սեփականության իրավունքի) խախտումները,
- արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

26. A-008-16. ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում ծագող հարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը,
- հայցի ապահովման հիմնահարցերը,
- վերաքննիչ և վճռաբեկ վարույթների հիմնահարցերը,
- հատուկ վարույթի գործերի, այդ թվում ընտրական վեճերի քննության ընթացքում ծագող արդի հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

27. A-003-16. ՀՀ վարչական վարույթի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է վարչական վարույթում առկա արդի հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչական ակտի պարտադիր հատկանիշները,
- վարչական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության հիմնահարցերը,
- վարչական ակտերի դատական բողոքարկման, դատարանի կողմից դրանց իրավաչափության գնահատման հիմնահարցերը,
- վարչական վարույթի և հատուկ նորմերի հարաբերակցության հարցերը,
- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի արդի հարցերը,
- տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի արդի հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

28. A-004-16. ՀՀ հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների վերաբերյալ դատավորների գիտելիքներն ընդլայնելու և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ հարցերը,

- պետական հարկերին փոխարինող շրջանառության հարկերի ոլորտը կարգավորող իրավական ակտերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ հարցերը,
- հաստատագրված վճարների և արտոնագրային վճարների ոլորտը կարգավորող, ինչպես նաև այլ իրավական ակտերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

29. A-005-16. Ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում

Դասընթացն անհրաժեշտ է ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքներն ընդլայնելու և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ստուգումների և ուսումնասիրությունների անցկացման կարգի հիմնահարցերը,
- ստուգման ժամկետները,
- ստուգման արդյունքների ամփոփման, վերստուգումների, ստուգման վարույթում տնտեսվարող սուբյեկտների և ստուգումն իրականացնող անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

30. A-006-16. Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում

Դասընթացն անհրաժեշտ է դատական ակտերի հարկադիր կատարման վարույթում առկա հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքներն ընդլայնելու, դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև նոր իրավական դիրքորոշումները դատավորներին մատուցելու համար:

Դասընթացը ներառում է՝

- կատարողական վարույթին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության հիմնահարցերը,
- կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի կայացրած որոշումների դատական բողոքարկման հիմնահարցերը,
- դատարանի կողմից դրանց իրավաչափության գնահատման հիմնահարցերը,

- դատական ակտերի կատարման և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի հարաբերակցության հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

31. A-007-16. ՀՀ մաքսային իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է մաքսային իրավունքի ոլորտում առկա հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- մաքսային իրավախախտումների հիմնահարցերը,
- մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման, դրանց մաքսային արժեքի որոշման հիմնահարցերը,
- մաքսային ռեժիմների հիմնահարցերը,
- մաքսային միջնորդական գործունեության հիմնահարցերը,
- հայտարարագրման հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

32. A-010-16. ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է ՀՀ էկոլոգիական իրավունքի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- էկոլոգիական իրավունքի կոնցեպցիան,
- ՀՀ էկոլոգիական օրենսդրության և հիմնական ինստիտուտների էությունը և առանձնահատկությունները,
- այլ ինստիտուտների հետ հարաբերակցությունը և զարգացման արդի միտումները,
- մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային կառուցակարգերի գործարկման վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

33. C-016-16. ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 16-րդ կետի ներքո:

34. C-027-16. Եվրասիական տնտեսական միության իրավունքը և դատարանի դերը դրա կայացման և զարգացման գործում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 23-րդ կետի ներքո:

35. J-024-16. Դատական փորձաքննության արդի հարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 24-րդ կետի ներքո:

36. Q-001-16. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքները և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝ քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրը,
- անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը,
- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը,
- արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

37. Q-032-16. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 12-րդ կետի ներքո:

38. Q-011-16. Անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ դատավորների գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անչափահասների նկատմամբ իրականացվող մինչդատական և դատական վարույթների անցկացման առանձնահատկությունների վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

39. Q-035-16. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև քրեական իրավունքի ոլորտում նոր իրավական դիրքորոշումները դատավորներին մատուցելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով նախատեսված, ինչպես նաև ընթացիկ փուլում առաջացող այլ հիմնախնդիրների լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձի ներկայացումը, դրանց զարգացման միտումները և հեռանկարները,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև <<Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին>> միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (այդ թվում՝ թրաֆիքինգի կամ շահագործման որակում, թրաֆիքինգի կամ շահագործման վերհանման հիմնախնդիրներ, աշխատանքային թրաֆիքինգ և սեռական շահագործում, ընտանեկան բռնություններ, աշխատանքային հարաբերություններ, սոցիալական ծանր վիճակում գտնվող ընտանիքներ, մարմնավաճառությամբ զբաղվող անձինք, այդ թվում՝ երեխաներ, մուրացկան երեխաներ, հատուկ հաստատություններում սովորող երեխաներ), և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
- համաչափ, կանխարգելիչ և արդյունավետ պատիժ նշանակելու հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

40. Q-022-16. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը,
- ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

41. Q-024-16. Դատական վերանայման հարցերը համաձայն ՀՀ քրեադատավարական նոր օրենսդրության

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում դատական վերանայման ոլորտին վերաբերող նոր իրավակարգավորումների վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- դատական վերանայման ընդհանուր հարցերը,
- վերաքննությանը վերաբերող հարցերը,
- վճռաբեկությանը վերաբերող հարցերը,
- հատուկ վերանայմանը և բացառիկ վերանայմանը վերաբերող հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործերով դատական վերանայում իրականացնող դատավորների համար:

42. Q-025-14. ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի գործառույթները՝ համաձայն քրեադատավարական նոր օրենսդրության

Դասընթացը պայմանավորված է քրեական վարույթ իրականացնելիս ընդհանուր իրավասության դատարանի գործառույթների նոր համակարգի վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումների անցկացման հիմնահարցերը,
- համաձայնեցման և համագործակցության վարույթներով դատալսումների անցկացման հիմնահարցերը,
- բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթով դատալսումների անցկացման հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

43. Q-030-16. Կիբերհանցագործությունների քննության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է <<Կիբերհանցագործությունների մասին>> ԵԽ Կոնվենցիայի կիրառման, նշված բնույթի հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- <<Կիբերհանցագործությունների մասին>> ԵԽ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում,
- նշված Կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեի (T-CY)՝ արարքների որակման հետ կապված բանաձևերը,
- ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների որակման հիմնախնդիրները,
- էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները,
- մանկական պոռնոգրական նյութերի հետ կապված քրեական գործերով ապացույցների ձեռքբերման հնարավոր տարբերակները,
- <<տոր>> կամ <<մութ>> ցանցերից ապացույցներ ձեռքբերելու դժվարությունները, նման հանցագործությունների լատենտայնությունը,

- կիբերհանցագործություններով միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

44. J-024-16. Դատական փորձաքննության արդի հարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 24-րդ կետի ներքո:

Արդարադատության ակադեմիայի
Ե.Խունդկարյան
կառավարման խորհրդի նախագահ

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ ***Ա.Մկրտչյան***

Հ.Ասատրյան

Հ.Բեդևյան

Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2016 թվականի
փետրվարի 15-ի թիվ 54-Ա որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2016թ. դատական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում. քաղաքացիական, քրեական և վարչական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունք, դատական ծառայություն, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություն, քրեական իրավունք, սեփականության իրավունք և ժառանգական իրավունք, հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումներ, դատական գործավարություն, ֆեմիդա համակարգչային ծրագիր, աշխատանքային իրավունք, հաշվապահական հաշվառման և գնումների իրականացում, արխիվային գործ, ժամանակի կառավարում:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ Ծրագրում նշված խմբերի համար նախատեսված դասընթացների մոդուլների հիման վրա:

5. Վերապատրաստման ժամաքանակը իրավաբանական մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողի համար նախատեսվում է 38,

ղեկավար պաշտոն զբաղեցնող դատական ծառայողի[1] համար՝ 34, ծրագրի 5-7 կետերում նշված մասնագիտական գործառույթ իրականացնող դատական ծառայողի համար՝ 24, դատական նիստերի քարտուղարների համար՝ 20, իսկ Դատական դեպարտամենտի ստորաբաժանումների այլ դատական ծառայողի համար՝ 14 ակադեմիական ժամ:

5. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն իրականացվում է մեկ շաբաթ ժամկետով և ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրը՝ բանավոր եղանակով, միասնական քննությամբ:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Քրեական գործեր քննող դատավորների օգնականների, ավագ օգնականների, խորհրդականների և քրեաիրավական ոլորտում մասնագիտացած դատական այլ ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	Q-001-16	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	10
2.	Q-022-16	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	10
3.	Q-035-16	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	10
4.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

2. Քաղաքացիական գործեր քննող դատավորների օգնականների, ավագ օգնականների, խորհրդականների և քաղաքացիաիրավական ոլորտում մասնագիտացած դատական այլ ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
5.	C-015-16	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քաղաքացիական գործերով	10
6.	C-012-16	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը	10
7.	C-026-16	ՀՀ սեփականության իրավունքի և ժառանգական իրավունքի արդի հարցերը	10
8.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

[1] Դատական դեպարտամենտի ղեկավար պաշտոնյաներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների, ծառայությունների ղեկավարներ, բաժնի պետեր, գրասենյակի պետեր:

3. Վարչական գործեր քննող դատավորների օգնականների, ավագ օգնականների, խորհրդականների և վարչաիրավական ոլորտում մասնագիտացած դատական այլ ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
9.	A-001-16	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով	10
10.	A-008-16	ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը	10
11.	A-004-16	ՀՀ հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների արդի հարցերը	10
12.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

4. Ղեկավար պաշտոններ զբաղեցնող դատական ծառայողների (դատական դեպարտամենտի ղեկավար պաշտոնյաներ, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների, ծառայությունների ղեկավարներ, բաժնի պետեր) վերապատրաստման դասընթացների մոդուլ.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
13.	J-011-16	Դատական ծառայության հիմնահարցերը	6
14.	C-008-16	ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը	10
15.	G-019-16	Կառավարման հմտություններ	10
16.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

5.Գրասենյակի պետերի վերապատրաստման դասընթացների մոդուլ.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
17.	J-011-16	Դատական ծառայության հիմնահարցերը	6
18.	G-011-16	Դատական գործավարություն	10
19.	G-019-16	Կառավարման հմտություններ	10
20.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

6. Գրասենյակի ավագ մասնագետների, մասնագետների, կրտսեր մասնագետների, ինչպես նաև գործավարների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
21.	J-011-16	Դատական ծառայության հիմնահարցերը	6
22.	G-011-16	Դատական գործավարություն	10
23.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

7. Գլխավոր հաշվապահների, հաշվապահների, գնումների մասնագետների և ֆինանսա-բյուջետային վարչության, ներքին աուդիտի վարչության, հաշվապահական հաշվառման և ֆինանսական վարչության, նյութա-տեխնիկական վարչության ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
24.	J-011-16	Դատական ծառայության հիմնահարցերը	6
25.	G-012-16	Հաշվապահական հաշվառման և գնումների իրականացման հիմնահարցերը	10
26.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

8. ՀՀ դատական արխիվի աշխատակիցների, ինչպես նաև արխիվապահների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
27.	J-011-16	Դատական ծառայության հիմնահարցերը	6
28.	G-013-16	Արխիվային գործի հիմնահարցերը	10
29.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

9. Դատական նիստերի քարտուղարների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
30.	J-011-16	Դատական ծառայության հիմնահարցերը	6
31.	G-020-16	Ֆեմիդա համակարգչային ծրագիր	6
32.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

10. Դատական դեպարտամենտի ստորաբաժանումների այլ դատական ծառայողների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
33.	J-011-16	Դատական ծառայության հիմնահարցերը	6
34.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Q-001-16. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է՝ քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրը,
- անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը,
- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը,

- արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքը:

2. Q-022-16. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքները ունկնդիրներին հաղորդելու, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտում նոր իրավական դիրքորոշումները մատուցելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը,
- ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում նաև Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի կիրառման առանձնահատկությունները,
- անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները,
- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը:

3. Q-035-16. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև քրեական իրավունքի ոլորտում նոր իրավական դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով նախատեսված, ինչպես նաև ընթացիկ փուլում առաջացող այլ հիմնախնդիրների լուծման ոլորտում

օրենսդրական և իրավակիրառ փորձի ներկայացումը, դրանց զարգացման միտումները և հեռանկարները,

- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև <<Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին>> միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (այդ թվում՝ թրաֆիքինգի կամ շահագործման որակում, թրաֆիքինգի կամ շահագործման վերհանման հիմնախնդիրներ, աշխատանքային թրաֆիքինգ և սեռական շահագործում, ընտանեկան բռնություններ, աշխատանքային հարաբերություններ, սոցիալական ծանր վիճակում գտնվող ընտանիքներ, մարմնավաճառությամբ զբաղվող անձինք, այդ թվում՝ երեխաներ, մուրացկան երեխաներ, հատուկ հաստատություններում սովորող երեխաներ), և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
- համաչափ, կանխարգելիչ և արդյունավետ պատիժ նշանակելու հարցերը:

4. G-006-16. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է՝

- ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը,
- ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ,
- ժամանակի տեսակները,
- ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները,
- մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում,
- մասնագետի ժամանակային իրազեկության,

- ժամանակի հիմնական «թակարդները»,
- ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծությունը, ժամանակաչափումը,
- ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները,
- գլոբալ նպատակների որոշումը,
- երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը,
- կարճաժամկետ և օպերատիվ պլանները,
- նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով,
- Էյզենհաուերի սկզբունքը:

5. C-015-16. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քաղաքացիական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է ՄԻԵԿ 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի, ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի, ինչպես նաև արդարացի բավարարման իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը,
- դատարանի իրավունքը,
- օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը,
- անկողմնակալ տրիբունալի էությունը,
- ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը՝ արդարացի լսումներ, մրցակցության սկզբունք, «Զենքերի» հավասարություն, հրապարակային քննություն, ողջամիտ ժամկետի սկզբունք,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքը,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կիրառման ոլորտը,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը սոցիալական երաշխիքների ապահովման հարցում,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը ձեռնարկատիրական գործունեության իրականացման ոլորտում,
- ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը մտավոր սեփականության ոլորտում,

- սեփականությունից զրկելը (ֆորմալ կամ փաստացի հարկադիր օտարումը),
- սեփականությունից զրկելու օրինականության պայմանները,
- պետական վերահսկողությունը սեփականության օգտագործման նկատմամբ և դրա պարտադիր պայմանները,
- գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտումը:

6. C-012-16. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,
- պետական տուրքի և դատական ծախսերի հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
- դատական հանձնարարությունների կատարման արդի հարցերը,
- քաղաքացիական դատավարությունում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը,
- ՀՀ ընտանեկան և ՀՀ աշխատանքային օրենսգրքերով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման հիմնախնդիրները, ինչպես նաև հատուկ վարույթի այլ գործերի քննության ընթացքում (այդ թվում՝ երեխայի որդեգրման գործերի վարույթը) ծագող հարցերը.
- <<ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի նոր իրավակարգավորումները:

7. C-026-16. ՀՀ սեփականության իրավունքի և ժառանգական իրավունքի արդի հարցերը.

Դասընթացն անհրաժեշտ է սեփականության իրավունքի ոլորտում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է՝

- սեփականության իրավունքի ձեռք բերման հիմնահարցերը,
- սեփականության իրավունքի դադարման հիմնահարցերը,
- ընդհանուր սեփականության հիմնահարցերը,
- սեփականության իրավունքի պաշտպանության իրավահարաբերություններից բխող հարցերը,
- ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգության հիմնահարցերը,
- ժառանգության ընդունման, դրա ձևակերպման,
- ժառանգությունից հրաժարման հիմնահարցերը,
- ժառանգության պահպանման և կառավարման հիմնահարցերը,
- ժառանգության հետ կապված ծախսերի հատուցման հարցերը,
- գույքի առանձին տեսակների ժառանգման առանձնահատկությունները:

8. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

9. A-001-16. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության արդյունքում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ արտահայտվելու ազատության իրավունքի, խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդրի, սեփականության իրավունքի) խախտումները,
- արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և դրա կիրառման հարցերը:

10. A-008-16. ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- գործը դատաքննության նախապատրաստման հիմնահարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը,
- հայցի ապահովման հիմնահարցերը,
- վերաքննիչ և վճռաբեկ վարույթների, հատուկ վարույթի գործերի, այդ թվում ընտրական վեճերի քննության ընթացքում ծագող արդի հարցերը:

11. A-004-16. ՀՀ հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ հարցերը,
- պետական հարկերին փոխարինող շրջանառության հարկերի ոլորտը կարգավորող իրավական ակտերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ հարցերը,
- հաստատագրված վճարների և արտոնագրային վճարների ոլորտը կարգավորող, ինչպես նաև այլ իրավական ակտերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ հարցերը:

12. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

13. J-011-16. Դատական ծառայության հիմնահարցերը

Դասընթացն անհրաժեշտ է դատական ծառայության հարցերի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է՝

- դատական ծառայության նորմատիվ իրավական կարգավորումը,
- դատական ծառայողի վարքագծի կանոնները,
- կադրային քաղաքականության առանձնահատկությունները,
- դատական ծառայության համակարգում վարչարարությունը:

14. C-008-16. ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավունքում առկա հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- աշխատանքային իրավահարաբերությունների ծագման և դադարման հիմնահարցերը,
- աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության և պատասխանատվության հիմնահարցերը,
- աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության հարցերը,
- աշխատանքային պայմանագրերի տեսակները,
- աշխատանքային պայմանագրերի լուծման, լուծման կարգի առանձնահատկությունները,
- հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները աշխատանքային հարաբերություններում:

15. G-019-16. Կառավարման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը:

16. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

17. J-011-16. Դատական ծառայության հիմնահարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 13-րդ կետի ներքո:

18. G-011-16. Դատական գործավարություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական գործավարության հիմնադրույթների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է՝

- դատական գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները,
- դատական վիճակագրության իրականացումը,
- <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի կիրառման գործնական հարցերը:

19. G-019-16. Կառավարման հմտություններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 15-րդ կետի ներքո:

20. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

21. J-011-16. Դատական ծառայության հիմնահարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 13-րդ կետի ներքո:

22. G-011-16. Դատական գործավարություն

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 18-րդ կետի ներքո:

23. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

24. J-011-16. Դատական ծառայության հիմնահարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 13-րդ կետի ներքո:

25. G-012-16. Հաշվապահական հաշվառման և գնումների իրականացման հիմնահարցերը

Դասընթացը պայմանավորված է հաշվապահական հաշվառման և գնումների իրականացման ոլորտում իրավական կարգավորումները ունկնդիրներին մատուցելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- հաշվապահական հաշվառման հիմնահարցերը (ՀԾ հաշվապահական ծրագրով աշխատանք, գանձապետական փոխանցումներ, <<ՀԾ>> հաշվապահական ծրագրով աշխատանք պահեստի հետ, բյուջետային հիմնարկների հաշվապահական հաշվառման էլեկտրոնային վարման առանձնահատկություններ, հարկային հաշվառման առանձնահատկություններ),
- ֆինանսական միջոցների պլանավորման հմտությունները, բյուջետային պլանավորման և գնումների իրականացման գործընթացի փուլերի նորմատիվ կարգավորումը:

26. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

27. J-011-16. Դատական ծառայության հիմնահարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 13-րդ կետի ներքո:

28. G-013-16. Արխիվային գործի հիմնահարցերը

Դասընթացը պայմանավորված է արխիվային գործի ոլորտում իրավական կարգավորումները ունկնդիրներին մատուցելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- արխիվային գործի մասին օրենսդրությունը,
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերաբերելի կարգավորումները,
- արխիվային գործի կազմակերպումը,
- արխիվային նյութերի պահպանման ժամկետները:

29. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

30. J-011-16. Դատական ծառայության հիմնահարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 13-րդ կետի ներքո:

31. G-020-16. Ֆեմիդա համակարգչային ծրագիր

Դասընթացն անհրաժեշտ է դատական նիստերի համակարգչային արձանագրման հմտությունների զարգացման համար:

32. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

33. J-011-16. Դատական ծառայության հիմնահարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 13-րդ կետի ներքո:

34. G-006-16. Ժամանակի կառավարում

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 4-րդ կետի ներքո:

Արդարադատության ակադեմիայի
Ե.Խունդկարյան
կառավարման խորհրդի նախագահ

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ ***Ա.Մկրտչյան***

Հ.Ասատրյան

Հ.Բեդևյան

Հավելված 3
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2016 թվականի
փետրվարի 15-ի թիվ 54-Ա որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:
2. Ծրագիրը ներառում է 2016թ. դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
3. Ծրագիրը նպատակաուղղված է դատական կարգադրիչների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը վարքաբանության, առաջին բուժական և հոգեբանական օգնության, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ոլորտներում:
4. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ու հատուկ ուսուցումն իրականացվում է մեկ շաբաթ ժամկետով և ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրը:
5. Վերապատրաստման ժամանակացույցը սահմանվում է 2016 թվականի ապրիլից հուլիսը:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչը	Անվանումը	Ժ/ք
1.	G-015-16	Դատական կարգադրիչների վարքաբանություն	12
2.	G-016-16	Առաջին բուժական և հոգեբանական օգնություն	12
3.	S-001-16	Հրազենի գործադման հմտություններ	6
4.	S-002-16	Հատուկ միջոցների գործադրման հմտություններ	10

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. G-015-16. Դատական կարգադրիչների վարքաբանություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայական վարքագծի կանոնները, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ G-016-16 դասընթացի հետ միասնական քննությամբ:

2. G-016-16. Առաջին բուժական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչներին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական գործառույթները:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ G-015-16 դասընթացի հետ միասնական քննությամբ:

3. S-001-16. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական կարգադրիչների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով:

4. S-002-16. Հատուկ միջոցների գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական կարգադրիչների մոտ հատուկ միջոցների գործադրման հմտություններ ձևավորելու համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով:

Արդարադատության ակադեմիայի
Ե.Խունդկարյան
կառավարման խորհրդի նախագահ

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ ***Ա.Մկրտչյան***

Հ.Ասատրյան

Հ.Բեդևյան

Հավելված 4
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2016 թվականի
փետրվարի 15-ի թիվ 54-Ա որոշման

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2016թ. դատավորների հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է դատավորների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 10 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) և ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	S-001-16	Հրազենի գործադման հմտություններ	10

1. S-001-16. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատավորների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքներ:

Արդարադատության ակադեմիայի
Ե.Խունդկարյան
կառավարման խորհրդի նախագահ

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ ***Ա.Մկրտչյան***

Հ.Ասատրյան

Հ.Բեդևյան